ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2020թ. թիվ 1077-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29 -Ի
N 133-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 14.06.2019թ. թիվ 413-Ա որոշումը և հաշվի առնելով «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 08.09.2020թ. գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. մարտի 29-ի «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 133-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) «6. Ընդունարան» մասում՝

ա. «Հերթապահ բուժքույր» տողից առաջ ավելացնել նոր տող.

	Ստացիոնարի հերթապահ բժիշկ	4.0

բ. 2-րդ տողում «Կրտսեր բուժաշխատող» բառերը փոխարինել «Հերթապահ մայրապետ» բառերով, «1.0» թիվը փոխարինել «3.0» թվով

գ.«Ընդամենը» տողում «5.5» թիվը փոխարինել «11.5» թվով:

2) «7. Շտապ-բուժ օգնության ենթակայան» մասում՝

ա. 4-րդ տողում «Հերթապահ վարորդ» բառերը փոխարինել «Հերթապահ վարորդ-սանիտար» բառերով,

բ. 4-րդ տողից հետո ավելացնել նոր՝ 5-րդ տող.

5.	Երթակարգավորող /դիսպետչեր/	3.0

գ. «Ընդամենը» տողում «13.0» թիվը փոխարինել «16.0» թվով:

3) «12. Բուժքույրեր» մասում՝

ա. 20-րդ տողից հետո ավելացնել նոր՝ 21-րդ տող

21.	Դեղագործ	1.0

բ. «Ընդամենը» տողում «43.5» թիվը փոխարինել «44.5» թվով:

4) «Ընդհանուրը» տողում «230.0» թիվը փոխարինել «240.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

12/14/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 14
ք.Վանաձոր